# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 , norik.melkonyan@mail.ru

N 1/103
*06 հունիս 2019թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 31-ին կայացրած թիվ 28-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Կատ. Քարտուղար՝ Մ. Կարապետյան*
*Հեռ.՝ 098-29-30-19*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2019 թվականի N 28-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ <<ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով

*որոշում եմ*

1. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսի 08-ին, Ողջաբերդ համայնքում իրականացնել համապետական շաբաթօրյակ:
2. Շաբաթօրյակի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ներգրավել համայնքի բնակիչներին և համայնքի տարածքում գործող բոլոր կազմակերպությունների հնարավորություններն ու միջոցները:
3. Հանձնարարել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին շաբաթօրյակի միջոցառումների շրջանակներում մաքրել,բարեկարգել իրենց կազամակերպության տարածքը և հարակից շրջակայքը:
4. Հանձանարարել Ողջաբերդի համայնքապետարանի աշխատակազմին համապետական շաբաթօրյակի օրը կազմակերպություններին ապահովել անհրաժեշտ տեխնիկայով, գործիքներով և նյութերով:
5. Շաբաթօրյակի անցկացման և կատարման աշխատանքների ծանուցման և դրանց նկատմամբ հսկողության իրականացումը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մ. Կարապետյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2019թ. մայիսի 31

գ.Ողջաբերդ